ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀԿԳՄՄՆ <<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ֆրանսերեն բանավոր խոսքի զարգացումը միջին դպրոցում

ԱՌԱՐԿԱ՝ Ֆրանսերեն

ԿԱՏԱՐՈՂ՝ -Անուշ Ղուկասյան

ՂԵԿԱՎԱՐ՝ ՕհաննաԱվետիսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

Գյումրի 2023

Բովանդակություն

Ներածություն ……..3

Գրականության ակնարկ ……..5

Հետազոտության մեթոդները …… 9

Տվյալների մշակում և վերլուծություն……..13

Գրականության ցանկ ……15

Ներածություն

Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ սովորում, հասկանում հիշում…

Ի տարբերություն գրավոր խոսքի՝ բանավոր խոսք առաջանում է հնչյուններ արտաբերելով: Գրավոր և բանավոր խոսքի փոխհարաբերությունը բարդ է: Լեզվաբանության մեջ բանավոր խոսքը մարդուն ի ծնե տրված ունակություն է: Եվ կան տեսակետներ, ըստ որի՝ գրավոր խոսքը իր գոյությամբ կախված է բանավոր խոսքից: Բանավոր խոսքը ուղիղ հաղորդակցության ոլորտում գործող հնչյունային խոսք է: Պատմականորեն խոսքի գրավոր ձևը առաջնային է, այն առաջացել է գրավորից շատ ավելի վաղ: Բանավոր խոսքն ունի այնպիսի ինտոնացիոն բազմազանություն, որ կարող է փոխանցել մարդկային ապրումների, տրամադրությունների ողջ հարստությունը: Հաղորդակցության ընթացքում բանավոր խոսքի ընկալումը տեղի է ունենում միաժամանակ ինչպես լսողական, այնպես էլ տեսողական ուղիներով: Ի տարբերություն գրավոր խոսքի, որը կառուցված է մտքի տրամաբանական շարժանը համապատասխան, բանավոր խոսքը ծավալվում է ասոցիատիվ կցումների միջոցով:

Գրավոր և բանավոր խոսքի տարբերությունն այն է, որ գրողը հնարավորություն չունի ազդելու հասցեատիրոջ վրա այն միջոցներով, որոնք ունի խոսողը իր զինանոցում:

Ի՞նչ է պահանջվում գրելու համար. իմանալ տառերը և կարողանալ կարդալ ու գրել բառեր և նախադասություններ:

Ի՞նչ է անհրաժեշտ բանավոր խոսքի համար. հասկանալ բառերի իմաստը և կարողանալ պատմել նախադասությունների միջոցով:

Ինչու՞ է մեզ անհրաժեշտ խոսքը: պատկերացնենք մի մարդու, ով չի կարող խոսել, լսել, կարդալ, գրել: Նրա կյանքում չկան գրքեր, համակարգիչ, ընկերներ:

Մարդը որքան շատ բառեր իմանա, որքան ճշգրիտ և վառ արտահայտի իր մտքերը, այնքան հաճելի է շփվել շրջապատի մարդկանց հետ, հետևաբար

անհրաժեշտ է ծանոթանալ նոր բառերի, սովորել այն կանոններն ու օրենքները, որոնցով կառուցվում է ճիշտ ու գեղեցիկ խոսքը:

Հին ժամանակներում մարդիկ գրել և կարդալ չգիտեին: Բայց նրանք գիտեին գեղեցիկ երգեր, հեքիաթներ հորինել: Իսկ դա նրանք անում էին վերապատմելու միջոցով:

Ժողովրդական իմաստությունն ասում է.

«Լավ ելույթը լավ է լսել»: «Նախ մտածիր, հետո խոսիր» :

Նպատակը և հետազոտական հարցը-Ի՞նչ մեթոդներ ու հնարներ են գործածվում բանավոր խոսքի զարգացման նպատակով:

Թեմայի կարևորությունը և նշանակությունը թիրախային խմբի համար

Թիրախային խումբն ընտրվել է միջին դպրոցի սովորողները, քանի որ միջին դպրոցի հիմնական նպատակը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների ձեռք բերման, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների, բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակն է, որն անհրաժեշտ է սովորողներին ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու, ինչպես նաև տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար:

Պետք է նշել նաև, որ միջին դպրոցում սովորողի մոտ, բացի ֆիզիոլոգիական փոփոխությունների առանձնահատկություններից, տեղի են ունենում հոգեկան փոփոխություններ. նախ անցումը տարրական դպրոցից միջին դպրոց, այնուհետև միջինից ավագ: Այս և այլ առանձնահատկություններից ելնելով՝ ուսուցչից շատ ջանք, եռանդ է պահանջվում այս անցումը սահուն կատարելու, ուսուցման գործընթացը ճիշտ և նպատակային կազմակերպելու համար:

Գրականության ակնարկ

Ինչպես արդեն նշվել է, բանավոր խոքսը մարդուն ի ծնե տրված ունակություն է: Այսինքն ինչպիսին էլ լինի աշակերտի մեկնարկային մակարդակը, լսելու կարողության ինչպիսի պաշարով էլ նա մտնի դասարան, ուսուցման և վարժանքների միջոցով այն կարելի է բարելավել, զարգացնել:

Այսօր, բարձր և զարգացած տեխնոլոգիաների պայմաններում թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողը շատ հնարավորություններ ունեն ուսուցման ճիշտ մեթոդներ ընտրելու դեպքում հասնել ցանկալի արդյունքի: Իսկ ուսուցման պրոցեսը ամբողջական ու համապատասխան գործընթաց է, ուստի անհրաժեշտ է ցուցաբերել համաժամանակյա մոտեցում:

Բանավոր խոսքի հույժ կարևոր կետերից մեկը լսելու հմտությանը տիրապետելն է: Այստեղ շատ կարևոր է տիրապետել <u>լսել-ունկնդրել-հասկանալը</u> և պարզապես <u>լսելը:</u>

Եթե լսելը զուտ ֆիզիկական ունակություն է, ապա լսել-ունկնդրելը հմտություն է, որը պահանջում է ուշադրության որոշակի նպատակային կենտրոնացում: Լսելու ունակությունը զարգացնելու համար անհրաժեշտ է բարելավել ուշադրության որոկը: Վարժանքների միջոցով՝ ուշադիր լսելու կարճ ժամանակահատվածներն երկարացնելով, կարելի է հասնել դրական արդյունքի: Հաճախ կարող են առկա լինել ուշադրության կենտրոնացմանը խանգարող գործոններ, օրինակ՝ աղմուկ, ոչ հստակ խոսք, ոչ բարենպաստ շրջապատ: Կարելի է ուսուցման գործընթացում խանգարող հանգամանքների ծավալը հասցնել նվազագույնի:

Շատ կարևոր է նաև զգացմունքային ֆոնը: Հաճախ սովորողը իր լսածը հասկանալու բազմաթիվ անհաջող փորձերից հետո գալիս է այն եզրակացության, որ օտար լեզուն հասկանալն իր ուժերից վեր է: Ուսուցչից պահանջվում է անպայման հաղթահարել նման պարտվողական, բացասական դիրքորոշումը: Բանավոր խոսքի ուսուցման մեջ պետք է կիրառել աստիճանական բարձրացման մարտավարությունը; Աստիճանական, քայլ առ քայլ հնարավոր է հաղթահարել հնչող նյութի ընկալման հանդեպ սովորողի վախը կամ հուսահատությունը:

Ուստի աշխատանքը ծրագրելիս պետք է առաջնորդվել հետևյալ կերպ. ընկնդրվող նյութի մակարդակը պետք է համապատասխանի սովորողի հիմքային գիտելիքներին: Մյուս կողմից նյութը պետք է հետաքրքիր ու համահունչ լինի սվորողի հետաքրքրություններին:

Մեկ այլ կարևոր գործոն է նաև մատուցվող նյութի ծավալը և որակը, որը պետք է համապատասխանի սովորողի մակարդակին:

Բանավոր խոսքի զարգացման կարևոր պայման է նաև ունկնդրած բանավոր խոսքի ճիշտ վերարտադրման գործընթացը. երբ սովորողը հնչած խոսքը կրկնում է հատված առ հատված, բառ առ բառ, նախադասություն առ նախադասություն, նա

- սովորում է ինքնուրույն ճիշտ արտասանել ունկնդրածը՝ այն համեմատելով բնօրինակի հետ:
- շտկում է արտասանական սխալները:
- հաղթահարում է օտար լեզվով խոսելու հանդեպ ունեցած վախը:
- ապրում է սեփական խոսքը վայելելու հաճույքը:

Այսօր օտար լեզվի ուսուցման խնդիրն է բանավոր և գրավոր հաղորդակցման ունակությունների ձևավորումը և զարգացումը, հետևաբար օտար լեզվի բառապաշարին տիրապետելը վերոնշյալ նպատակի իրականացման անբաժանելի մաս է կազմում: Բառապաշարի ուսուցումը լեզվակրթության առանցքն է, առանց որի անհնար է տվյալ լեզվով հաղորդակցվելը: Բառապաշարային գիտելիքները զարգացնող ռազմավարությունները անընդհատ փոփոխվում, համալրվում են նոր վարժություններով, քանի որ ժամանակի հետ փոփոխվում են նաև ուսուցման մեթոդները, մոտեցումները, նպատակները: Հաղորդակցությունը բարելավվում է ամենից առաջ բառապաշարի հարստացմամբ և ճիշտ գործածությամբ: Դպրոցում օտար լեզվի ուսուցման ընթացքում սովորողները պետք է լսեն, ընկալեն և յուրացնեն բառապաշարային միավորների նշանակություններն ու ձևերը և կարողանան կիրառել դրանք բանավոր և գրավոր հաղորդակցման տարբեր իրավիճակներում, այսինքն՝ հաղորդակցման ընթացքում պետք է կարողանան

կիրառել բառապաշարային միավորները և կարողանան հասկանալ դրանք և՛ լսելիս, և՛ ընթերցելիս:

Կրթական բարեփոխումների համատեքստում փոփոխվել են ինչպես կրթական համակարգի բովանդակությունը և դասավանդման մեթոդամանությունը, այնպես էլ գնահատման համակարգը: Կրթության որակի բարելավմանն ուղղված փոփոխությունների նպատակներից մեկը սովորողների ուսումնական գործընթացում ներգրավված լինելու շարժառիթը բարձարացնելն է: Այս առումով գնահատումն ունի իր ուրույն տեղն ու դերը: Արդարացի, ճիշտ, օբյեկտիվ և թափանցիկ գնահատումը խթանում է ուսումնառությունը, սովորողների մոտ ձևավորում է դրական վերաբերմունք ուսումնառության նկատմամբ, ինչպես նաև սովորողները ձեռք են բերում ինքնքվստահություն՝ իրենց ուժերը գնահատելու, դրանց ապավինելու հարցերում:

Վերջին տարիներին մեծ տեղ է հատկացվել ակտիվ հաղորդակցական կարողությունների զարգացմանն ու կիրառմանը ոչ միայն դասի ժամանակ, այլ նաև՝ իրական կյանքում: Իրականում պետք է գնահատել ոչ միայն սովորողի ձեռք բերած գիտելիքը, այլ նաև, թե ինչ է ի վիճակի անել սովորողը, ինչպես կարող է ստացած գիտելիները գործածել իրական կյանքում:

Խոսքային գործունեության յուրաքանչյուր տեսակ ունի ստուգման և գնահատման համար իրեն յուրահատուկ տեսակներն ու ձևերը: Գնահատման մեթոդաբանության մեջ պետք է հաշվի առնել հետևյալ մոտեցումը՝ առաջադրանքները պետք է լինեն պարզ ընկալումից մինչև ստեղծագործական բարդ խնդիրներ լուծող առաջադրանքներ: Քերոլն ասում է, որ շատ կարևոր է, որ առաջադրանքը կատարողները տեղյակ լինեն 2 հանգուցային կետերի մասին.

1. ինչպիսի արդյունք է ակնկալվում
2. Ինչ չափանիշներով է գնահատվում

Վերոնշյալ կետերի առկայությունը շատ կարևոր է խոսելու ունակությունը կամ բանավոր խոսքի գնահատման գործում:

Բանավոր հարցումն ինքնին ապահովում է և՛ մասնակցություն, և՛ հաղորդակցում: Բանավոր հարցման նպատակն է.

- կիրառել լեզուն
- զարգացնել բանվոր խոսքը, հոկել լեզուն. աշակերտները կարողանան հստակ ձևակերպել մտքերը
- արագ և ճիշտ կողմնորոշում
- ձևավորել զարգացնել լսելու կարողություն

Բանավոր հարցմամբ լուծվում են հետևյալ խնդիրները.

- գիտելիքների յուրացում
- բանավոր խոսքի զարգացում
- լեզվամտածողության ձևակերպում
- վերարտադրման կարողությունների զարգացում
- ստեղծագործական կարողությունների ձևավորում և զարգացում

Բանավոր հարցման և գնահատման ամենատարածված տեսակներից է.

- մենախոսությունը
- երկխոսությունը
- հարցազրույցը
- դերախաղը
- մտքերի փոխանակում
- շարադրանքի բանավոր ներկայացում
- ինտերակտիվ առաջադրանքներ
- համագործակցային առաջադրանքներն ու քննարկումները

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառումը

ինքնանպատակ չի կարող լինել: Այն կապված է բազմաթիվ խնդիրների ու նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ունենալ միայն պլանավորված, կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով:

Ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մաս են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը: Ուսուցչի մեթոդական վարպետությունը ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող ուղիներից մեկն է:

Հայ աշակերտների համար առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում բանավոր հաղորդակցվելը (լսելը-հատկապես խոսելը): Պատճառները կարող են բազմաթիվ լինել. Դպրոցներում գրեթե անտեսվում են լսողական ընկալման ունակությունների զարգացմանն ուղղված վարժությունները, իսկ բանավոր խոսքի զարգացման համար վարժությունները հիմնականում սահմանափակվում են պարզունակ (ձանձրալի) փոխակերպական վարժանքներով, ըթերցված տեքստի մասին հարց ու պատասխանով:

Իրական խոսքային գործունեությունը տեղի է ունենում հանպատրաստից. Խոսողը չունի երկար մտածելու, խոսքը ձևակերպելու, վերանայելու, ուղղելու հնարավորություն: Բանավոր հաղորդակցվելիս աշակերտի համար ամենակարևոր խոչընդոտը կարող է լինել նրա հոգեբանական բարդույթը՝ սխալվելու, ընկերների ծիծաղին արժանանալու վախը:

Այդ պատճառով ինչ-որ բան ասելուց առաջ նրան մտահոգում է ոչ թե ինչ ասելու, այլ ինչպես ասելու խնդիրը:

Ելնելով դասավանդման պրոցեսում հանդիպող վերոնշյալ խնդիրներից՝ հետազոտության ընթացքում անդրադարձել եմ դրանց լուծմանն ուղղված տարբեր մեթոդների ու հնարների գործածմանը ուսուցման պրոցեսում:

Քանի որ հետազոտության նպատակը բանավոր խոսքի զարգացման համար արդյունավետ մեթոդների ու հնարների գործածումն է, հետազոտական գործընթացը կատարվել է ուսուցման պրոցեսի ընթացքում, միջին դպրոցում (5-9 րդ դասարաններում): Հաշվի առնելով միջին դպրոցում հանդիպող տարիքային, հոգեբանական տարբեր առանձնահատկությունները, տվյալների հավաքագրման

մեթոդ ընտրվել է *դիտարկումը* : Հետազոտության ընթացքում նշված դասարաններում գործածվել են տարբեր մեթոդներ ու հնարներ (ավանդական, ինտերակտիվ), որոնք միտված են եղել լուծել նշված խնդիրներն ու դժվարությունները և հասնել ցանկալի վերջնարդյունքի՝ զարգացնել բանավոր խոսքը:

Հետազոտության ընթացը

5-րդ դասարանԹեմա - ,,Bonjour le français'', L'automne''

Առաջին դասաժամին ըստ ավանդական մեթոդների՝ դասն ընթերցվեց, ըստ իմ հրահանգների սովորողները կատարեցին գրքում եղած վարժությունները (անծանոթ բառապաշարի դուրս բերում, հարց ու պատասխան): Դասը շատ պասիվ ու միապաղաղ էր, ինչպես նաև ընդգրկվեցին ոչ բոլոր աշակերտները: Հաջորդ դասաժամին գործածվեց զրույց, դերախաղ, հարց ու պատասխան մեթոդները. մասնակցեցին բոլոր աշակերտները՝ շատ սահուն ու հստակ ներկայացնելով իրենց, կամ ընկերոջը: ,,Աշուն՛՛ բանաստեղծությունն ուսումնասիրելիս նախ դիտեցին տեսանյութը (դիտում երկու անգամ), որի ընթացքում գրառեցին ունկնդրած ծանոթ բառերն ու բառակապակցությունները: Այնուհետև ընթերցեցին բանաստեղծությունը՝ համադրելով գրառված բառերի հետ: Այս ամենից հետո աշակերտները շատ արագ անգիր սովորեցին բանաստեղծությունը:

Երկրորդ դասաժամի ավարտին եկա այն եզրակացության, որ դերախաղը, զույգերով աշխատանքը, դիտումը, ունկնդրումը, համադրումը արդյունավետ մեթոդներ են սովորողի բանավոր խոսքի զարգացման համար:

6-րդ դասարան - Թեմա ,, La lettre de Julie'' - Մտագրոհ վարժության միջոցով սովորողները եզրակացրեցին, որ տեքստը, որի հետ աշխատելու են, նամակ է:

Այնուհետև աշակերտներին 2 խմբի բաժանելուց հետո, հանձնարավեց աշխատել յուրաքանչյուրը տեքստի մի հատվածի հետ (բառապաշար, նկարել ընտանիքի անդամներին այնպես, ինչպես կպատկերացնեին): Դասի ավարտին յուրաքանչյուր

խումբ ներկայացրեց տեքստի՝ իրեն բաժին հասած մասը: Այս վարժանքը կատարելիս շատ ակնառու էր սովորողների դերերի բաժանումը, արագ կողմնորոշումը (ընթերցող, նկարող, ժամանակին հետևող, ներկայացնող): Խմբային աշխատանքը շատ խթնող, ոգևորող, մեթոդ է: Այն աշակերտին խթանում է բանավոր խոսել, ներկայացնել իր աշխատանքը, իսկ խմբի մյուս անդամների մոտ՝ ուշադրության կենտրոնացումը, որպեսզի լրացնեն դասընկերոջը, խմբի աշխատանքը լրիվ, հանգամանորեն ներկայացնելու համար:

7-րդ դասարան - Թեմա – Vacances d'été, -Voyage

Նպատակ- Իմանալ թեմատիկ բառապաշարը, Վերջնարդյունք- կարողանալ պատմել տեքստը՝ գործածելով թեմատիկ բառապաշարը: Բառային աշխատանքից, հարց ու պատասխանով ամփոփելուց հետո, առաջարկեցի տեքստից դուրս գրել հատուկ անուններն և բնորոշել հասարակ գոյականներով: Ստացված գծապատկերից օգտվելով՝աշակերտները կազմեցին նախադասություններ: Այս մեթոդը օգնեց նախապատրաստվել տեքստը բանավոր ներկայացնելուն:





8 –րդ դասարան – Թեմա - Les fêtes

Շատ արդյունավետ է խմբային, հետազոտություն, շրջագայություն պատկերասրահում կամ խաճանկար մեթոդների կիրառումը: Այս մեթոդները կիրառելիս թեմայի ավարտին ունենում ենք շատ գեղեցիկ պատի թերթեր, պաստառներ: Այս դեպքում զարգանում է խոսելու, լսելու, ինքնուրույն աշխատելու, ստեղծագործաբար մտածելու, աշխատանքը բանավոր ներկայացնելու հմտություններն ու կարողությունները:

9-րդ դասարան - Թեմա „L'Arménie", „La France"

Այս թեմաներն ուսումնասիրելիս գործածել եմ <<Շրջված դասարան>> մեթոդը: Նախորդ դասի ավարտին դասարանը բաժանեցի երկու խմբի, հանձնարարվեց տանը դիտել այս երկու երկրները ներկայացնող տեսաննյութերը (10 րոպե): Հաջորդ դասի սկզբին յուրաքանչյուր խումբ լրացրեց
հետևյալ աղյուսակը

ville	rivière	montagne	lac	climat	pays voisins

Դասի ավարտին օգտվելով աղյուսակից՝ յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր դիտած և ուսամնասիրած երկիրը:
Մեթոդի գործածումը շատ արդյունավետ էր, պետք է նշել, որ այն գործածել եմ առաջին անգամ:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով դիտարկման ընթացքում՝ ելնելով մեր նպատակից, հանգել ենք այն զրակացության, որ բանավոր խոսքը զարգացնելու, օտար լեզվով հաղորդակցվելու համար բավական չէ տիրապետել լեզվի քերականությանը, ունենալ բավարար բառապաշար: Հենց այս սկզբունքն է, որ սովորողին խանգարում են հաղորդակցվել, ճիշտ արտահայտել մտքերը, քանի որ աշակերտներին ջանասիրաբար բացատրելով քերականական կանոնները, սերտել տալով բացառությունները, անգիր հանձնարարելով բառերի շարքերը մեզ չեն տանում դեպի ցանկալի նպատակ, սպասելի արդյունք. այս ամենը մի քանի դաս հետո

մոռացվում է: Արդյունքում ամենալավ աշակերտն անգամ դժվարանում է պատասխանել օրվա դասի հետ առնչություն ունեցող ամենապարզ հարցերին. նրանց մոտ պակասում է օտար լեզվով հաղորդակցման բավարար հմտությունները:

Հաղորդակցվել նշանակում է ընկալել լսածը կամ ունկնդրածը, տալ տրամաբանական պատասխան: Բանավոր խոսքը պահանջում է ավելի շատ հմտություններ, գիտելիքներ, քան պարզապես քերականորեն ճիշտ նախադասություն կազմելը: Օտար լեզվով խոսելն ավելի դժվար է, քան գրելը: Որպեսզի աշակերտները կարողանան հաղթահարել նշված դժվարությունները՝անհրաժեշտ է ստեղծել իրական կյանքին մոտ իրավիճակներ՝ բանավոր հաղորդակցությունը խթանելու համար:

Լսելու, բանավորխոսքիընկալմանհմտություններընիսկարևորվումենօտար լեզվի ուսուցման գործընթացում: Լսելնխոսքիիմաստնընկալելսովորեցնողվարժանքներըմիտվածենբանավոր խոսքը զարգացնելու, հաղորդակցային հմտությունները զարգացնելու համար:

Աշակերտների միջև հաղորդակցություն անհրաժեշտ է ապահովել զույգային/ խմբային աշխատանքների միջոցով, սահմանափակելով ուսուցչի խոսքին հատկացվող ժամանակը: Դրա համար անհրաժեշտ է նրանց սովորեցնել զրույց սկսելու- ավարտելու, ինչպես նաև հրավեր, շնորհավորանք և այլն արտահայտելու, դրանց պատասխանելու ձևերը: Անհրաժեշտ է խթանել դասարանում աշակերտների բանավոր հաղորդակցումը: Կարևոր է, որ աշակերտները ներգրավված լինեն իրական, ակտիվ հաղորդակցման մեջ: Ինչպես որ կարդալ սովորում են կարդալով, այնպես էլ՝ խոսել սովորում են խոսելով: Դպրոցական դասագրքերում անհրաժեշտ է ներառել այնպիսի վարժություններ և առաջադրանքներ՝ որոնք միտված են բանավոր խոսքի զարացմանը. Օրինակ՝ նկարագրություն, համակցում, համադրում, խճանկար, բանավեճ, դերախաղ, ձնագունդ և այլն:

Նշելով, որ օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջմշակույթային ձուխըմբռնմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, բնության ու

ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքների ստանալուն, գեղագիտական, բարոյական սոցիալական, համամարդկային- արժեքների գիտակցմանը, պահպանմանն ու փոխանցմանը, օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը սովորողի հաղորդակցվելու, համագործակցելու կարողությունները զարգացնելն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Օտար լեզուները Հայաստանում (2015/5, 2011/6)
2. Ամալյա Բաբայան, Արթուր Իսրայելյան , <<Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների ուսուցում>>
3. https://www.persee.fr/doc/reper_1157-1330_2001_num_24_1_2367 ,,Enseigner l'oral''
4. https://www.deboecksuperieur.com/ouvrage/9782807332690-comment-enseigner-l-oral-aux-eleves ,,Comment enseigner l'oral aux éléves''